ԳՐԻԳՈՐ ԱՎԵՏԻ ՋԱՆՇՅԱՆ (ՋԱՆՇԻԵՎ)

Հ.Ա.ՀԱՄԲԱՐՅԱՆ

Հայ ժողովրդի շատ անվանի զավակների գործունեությունն ուսումնասիրված ու ըստ արժանվույն գնահատված է, բայց կան նաև այնպիսիք, որոնց գործունեությունը տակավին քիչ է ուսումնասիրված ու արժևորված: Դրանցից մեկը Գրիգոր Ավետի Ջանչյանն է (Ջանշիև): Նա ծնվել է Թիֆլիսում 1851թ. մայիսի 17 (29)-ին: Սկզբում սովորել է տեղի ռեֆորմատական ծխական, ապա հայկական ծխական դպրոցներում, այնուհետև՝ Թիֆլիսի նահանգային գիմնազիայի նախապատրաստական դասարանում: 1864թ. մեկնել է Մոսկվա և ընդունվել Լազարյան ճեմարան, որն ավարտել է արծաթե մեդալով, գրանցվելով ոսկե հուշատախտակում: Այնուհետև ընդունվել է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, որն ավարտել է 1874թ.

Գր. Ջանչյանը սկզբում զբաղվել է փաստաբանությամբ, բայց շուտով թողել է և նվիրվել գրականության, իրավունքի, դատավարության, փաստաբանության հարցերին: Շուտով «Սուդեբնի վեստնիկ» ամսագրում հրատարակվում են նրա առաջին իրավաբանական հոդվածները: 1870-ական թվականների վերջերից Գր.Ջանչյանի հոդվածները լույս են տեսնում "Судебный вестник", "Журнал гражданского и уголовного права", "Русская мысль", "Вестник Европы" պարբերականներում և "Русские ведомости" թերթում: Վերջինում նա գրում է առաջնորդողներ և վարում դատական բաժինը, ապա դառնում թերթի հրատարակիչ-խմբագիրներից մեկը:

Գր.Ջանչյանը դրական էր գնահատում, որ Ռուսաստանում դատավարության հիմքում դրվում են այն իրավական սկզբունքները, որոնք սահմանվել էին 1864թ. ռեֆորմով: Իսկ դրանք, ինչպես հայտնի է, 1860-ական թվականների բարեփոխումների մեջ ամենադեմոկրատականներից էին:

Գր.Ջանչյանի գործունեությունը թեև ծավալվեց Ալեքսանդր III-ի և Նիկոլայ II-ի հետադիմական կառավարման տարիներին, բայց նա հաստատ մնաց իր ընտրած լիբերալ-լուսավորական գաղափարներին՝ համալրելով ռուսական 60-ականների առաջադեմ շարքերը և շարունակելով նրանց լավագույն ավանդույթները: Բավական է նշել, որ նրա գործունեության մեծ մասը ծավալվեց "Русские ведомости" թերթի խմբագրությունում, ուր տարբեր ժամանակներում աշխատել են այնպիսի դեմքեր, ինչպիսիք են Ն.Չերնիշևսկին, Գ.Լավրովը, Մ.Սալտիկով-Շչեդրինը, Լ.Տոլստոյը, Գ.Ուսպենսկին, Ն.Միխայլովսկին և ուրիշներ "Русские ведомости" լրագիրը մշտական ու անզիջում պայքարի մեջ էր ցարիզմի հետադիմական քաղաքականությունը պաշտպանող "Московские ведомости" թերթի դեմ:

Գր.Ջանչյանը զբաղվում էր ոչ միայն իրավաբանության, այլև պատմության, գրականության, արվեստի, տնտեսագիտության և այլ հարցերով: 1880 - 1890-ական թվականներին նա լույս ընծայեց մի շարք արժեքավոր

---

[1] *Տե՛ս Большая Советская Энциклопедия, т. 8, М., 1972, с. 193, Андрей Белый, Армения, Е., 1985, с. 176.*

աշխատություններ : Գիտնականի աշխատություններն այնքան կարևոր էին ու արդիական, որ վերահրատարակվում էին մի քանի անգամ (օրինակ, «Մեծ բարեփոխումների դարաշրջանից» գիրքը վերահրատարակվեց 9 անգամ):

Գր.Ջանչյանը հիմնավոր զբաղվել է նաև հայ ժողովրդի, հատկապես արևմտահայության պատմությամբ: Ջերմորեն սիրելով իր ժողովրդին և խորապես ապրելով նրա վիշտը, գիտնականը 1880 – 1890-ական թթ. նրա կացության մասին ռուսերենով լույս ընծայեց մի շարք աշխատություններ, որոնցից պիտի հիշատակել «Հայկական հարցը Թուրքիայում (Ստամբուլյան հրապարակախոսի հետ նամակագրությունից, Մոսկվա, 1893)» գիրքը, որը հրատարակվել է Գր.Ա.Դիև հեղինակային կեղծանունով: Այն հոյակապ հրապարակախոսական-գիտական ուսումնասիրություն է, որը պահանջում է լուծել Հայկական հարցը ըստ արդարության ու մարդասիրության:

Սակայն, Գր.Ջանչյանի անհամեմատ ավելի մեծ գործը «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» արժեքավոր ժողովածուի ստեղծումն էր, որը հրատարակվեց Մոսկվայում 1897 և 1898թթ. (կրկնակի հրատարակությամբ): Այդ ժողովածուում նա զետեղել է տարբեր հեղինակների աշխատությունները, որոնք վերաբերում են հայ ժողովրդին, հատկապես նրա արևմտյան հատվածին: Գր.Ջանչյանը ժողովածուում բերել է նաև հայկական կյանքից պատկերներ, որոնք արտացոլում են հայերի խաղաղ, ստեղծագործական աշխատանքը, նրանց տանջանքն ու տառապանքը Թուրքիայում, նրանց կոտորածներն ու ջարդերն իրենց համար դժոխք դարձած այդ երկրում: Նկարների մի մասը պատկանում է Հ.Այվազովսկու և Վ.Սուրենյանցի վրձնին, իսկ մյուսները ձեռք են բերվել զանազան հրատարակություններից: Ժողովածուն նաև ժողովրդականացնում է հայ ժողովրդի արժեքները, ստեղծած գանձերը, նրա որդիների փառապանծ գործերը և հակահարված է տալիս այն զրպարտիչներին, որոնք զեկավարվելով ցարական մեծապետական քաղաքականությամբ, աշխատում էին Ռուսաստանում, նույնիսկ արտասահմանյան այլ երկրներում վարկաբեկել հայերին՝ նրանց վերագրելով զանազան բացասական հատկություններ ու գործեր:

Գր.Ջանչյանի կազմած ժողովածուն բարձր է գնահատվել ժամանակի ռուս առաջադեմ դեմոկրատական մտավորականության կողմից: Վ.Մ.Գոլմստրեմը դրում էր, որ այն «մեր ժամանակի լուսավոր երևույթներից մեկն է, յուրատեսակ հանրագիտարան է, բարության քրեստոմատիա: Այդպիսի գիրքը դաստիարակում է» (էջ B): "Новое время" թերթը հաղորդում էր, որ ժողովածուն գերազանց է հրատարակված ամեն տեսակետից, և որ ռուս հասարակությունն անտարբեր չի մնա հայոց տառապանքների հանդեպ (էջ C): "Вестник Европы" ամսագիրը նշում էր, որ ժողովածուն իր հարուստ և բազմազան բովանդակությամբ գրավում է ընթերցող հասարակայնության ուշադրությունը, և որ Թուրք դահիճների կողմից սպանված ու թալանված բազմաթիվ հայերը անտարբեր չեն կարող թողնել ընթերցողին: Ռուս հասարակայնությունը հայերին պետք է ցուցաբերի նյութական օժանդակություն (էջ C):

---

[2] Роль Д.Н.Замятина в судебной реформе, М., 1882; С.И.Зарудный и судебная реформа, М., 1889; Из эпохи великих реформ (освобождение крестьян, отмена телесных наказаний, университетская автономия, земство и др.), М., 1894 և այլն:

Ժողովածուի հրատարակմամբ Գր.Զանչյանի գլխավոր նպատակն էր միջոցներ հավաքել և ուղարկել Թուրքիա՝ կոտորածների հետևանքով որբ մնացած հայ երեխաներին օգնելու համար, որոնց թիվը քիչ չէր: Կ.Պոլսի հայոց պատրիարք Մ.Օրմանյանն այդ օրերին գրում էր, որ դժվար է նկարագրել արևմտահայերի վիճակը: Կան տեղեր, ուր նրանք շաբաթներով հացի երես չեն տեսնում, սնվում են բույսերով: Սովահարների զանգվածներն իրենց օրերն անց են կացնում փողոցներում կամ եկեղեցիներում: Եղել են սովից մահացողներ: Տառապում են հատկապես որբերը :

Գր. Զանչյանը օգնության ձեռք մեկնեց որբերին: Նա ժողովածուի առաջին հրատարակությունից հավաքեց 30.000, իսկ երկրորդից՝ 60.000 ռուբլի: Այդ գումարները նա Կ.Պոլսի ռուսական դեսպանի միջոցով ուղարկեց Մ.Օրմանյանին, որը դրանցով բացեց 12 որբանոց (Դիարբեքիրում, Ախթամարում, Բալուում, Աղբակի Ս.Բարդուղիմեոս վանքում, Ցոնուզի Ս.Աստվածածին վանքում, Ալաշկերտում, Վանի Սալնապատի Ս.Գրիգոր մենաստանում, Ախսում, Կյուրինում, Զարսանջակում, Հասան-Բեյում և Մուշում)[4]: Մեկն էլ բացվելու էր Խիզանում: Բայց, ցավոք, չբացվեց՝ Գր.Զանչյանի մահվան պատճառով : Հասարակությունը Գր.Զանչյանին կոչում էր «Որբերի բարեկամ», «Որբերի հայր», «Որբերի փրկիչ», նվիրական անուններով և գրվատում նրա հիանալի գործը :

Հումանիստ գործիչը չսահմանափակվեց միայն հայկական շրջաններով: Տեսնելով, որ կարիքի ու թշվառության մեջ տառապում են նաև ռուսներ, իր հիմնավոր աշխատություններից մեկի («Մեծ բարեփոխումների դարաշրջանից») հոնորարը նվիրեց ռուս աղքատ գյուղացիներին և ուսանողներին: Գր.Զանչյանի համար հեշտ չէր տրամադրել այդ գումարները: Դրանք, ինչպես ինքն էր ասում, հավաքել էր «թուք ու մուրով» : Տարբեր առիթներով նա ասում էր, որ եթե "Русские ведомости"-ի վճարած հոնորարը չլիներ, «մեկն էլ պետք էր իր օգտին հանգանակություն կազմակերպեր»[8] :

Գր.Զանչյանը մահացավ 1900թ. հուլիսի 17-ին Մոսկվայում սրտի հիվանդությունից, ուժերի ծաղկման ու ծավալման շրջանում: Նա վախճանվեց անժառանգ: Զգալով վերահաս մահը, թողեց կտակ, որով իր ունեցվածքը կտակում էր եղբորը, "Русские ведомости" լրագրի գրասենյակի ու տպարանի ծառայողներին, Արևմտյան Հայաստանի որբանոցներին, Ամենայն Հայոց կաթողիկոսությանը, զանազան բարեգործական հիմնարկությունների: Իսկ գրադարանը կտակել էր Էջմիածնի մատենադարանին, պայմանով, որ եղբայրն իրավունք ունի ընտրել և վերցնել իր ցանկացած գրքերը :

---

[3] Братская помощь пострадавшим в Турции армянам, М., 1898, с. LXXIII:

[4] Արևելք, 29. VII. 1900:

[5] Նույն տեղում:

[6] Տե՛ս Ազատ Համբարյան, Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898 - 1908), Ե., 1999, էջ 89:

[7] Բյուզանդիոն, 4. IX. 1900:

[8] Նույն տեղում.

[9] Մշակ, 16. VIII. 1900, Նոր Դար, 29. VIII. 1900:

Գր.Ջանչյանի մահը խորապես սգաց ոչ միայն հայ, այլև ռուս հասարակությունը: Նրա մահվան կապակցությամբ հայ և ռուս պարբերականներում բազմաթիվ հոդվածներ հրապարակվեցին: Այսպես, 1900թ. հուլիսի 20-ին «Մշակը» գրում էր, որ «Գր. Ջանչյանի մահը ծանր, ցավալի կորուստ է մեր ազգի համար: Նա իր կյանքը նվիրել էր անթիվ ու անհամար որբուկներին: Գր.Ջանչյանը չուներ ոսկի, կամ իշխանավորի դիրք· Նա ուներ մի համեստ գրիչ, որով հալեցրեց հայի ցուրտ սրտի ժայռը, շարժեց օտարի գութը ե կաթ-կաթ միլոցներ հավաքելով, դուներ բաց արեց ոճրագործների զոհերի առաջ: Չկա ուրիշ Ջանչյան: Նրա ձայնը մեղմ, բայց ազդու և եռանդոտ էր: Քանի՛ քանի՛· անգամ է այդ ձայնը բարձրացրել իբրև վրդովմունքի փոթորիկ մարդկային չարության, անսանձ ու լիրբ զրպարտությունների դեմ. քանի՛ քանի՛ անգամ նա մարդասիրության, արդարության դասեր է տվել այն օտարերկրացիներին, որոնց համար մեծ զվարճություն էր հալածել ուրիշներին, ոտի տակ տալ նրանց ամենանվիրական հասկացություններն անգամ: Այժմ այդ ձայնը գերեզմանի խորքում խեղդված պիտի մնա: Ահա ինչ կորցրինք»[10]:

"Русские ведомости" լրագիրը Գ.Ջանչյանի մահից փոքր-ինչ անց, գրում էր. «Այս քառասուն օրվա ընթացքում մենք ամեն կողմից անգադար ստանում ենք ցավակցության արտահայտություններ՝ մեր թանկագին ընկերոջ ե անմոռանալի աշխատակցի մահվան առիթով: Գրեթե ամբողջ մայրաքաղաքային և գավառական մամուլը արձագանքեց Գրիգոր Ջանչյանի հիշատակին նվիրված հոդվածներով: Բազմաթիվ նամակներ ե հեռագրեր, որոնց մի մասն արդեն հրատարակել ենք, պարզ ցույց են տալիս, որ Հանձին Ջանչյանի, շատերը կորցրել են ոչ միայն սիրելի գրողին, այլև իրենց սրտին մոտ մարդուն, որը մարդկանց ծառայում էր ոչ միայն անխոնջ, բարերար աշխատանքով, այլև իր ազնիվ, սիրառատ սրտով...»[11]: Ապա թերթը բերում էր ռուս գրողներից մեկի խոսքերը, որոնք վերցված են խմբագրությանն ուղարկած նրա նամակից. «Ճիշտ է, որ «բախտավոր մարդու թշնամիներն են մեռնում, իսկ անբախտի՝ բարեկամները»... ինչպե՛ս վշտացրեց ինձ անմոռանալի Գրիգոր Ջանչյանի մահը: Հանձին նրա, անակնկալ իրենց բարեկամին կորցրին, և ի՛նչպիսի բարեկամի, ոչ միայն նրա թշվառ ցեղակիցները՝ հայերը, այլև... կրթված առաջավոր Ռուսաստանը... ի՞նչ կարելի է այս դեպքում ասել ի մխիթարություն: Ի՞նչ կարելի է ասել մանավանդ ձեզ, որ այնքան մոտիկ էիք այդ ազնիվ հոգուն, այդ մեծահոգի սրտին...»[12]:

Հայ անվանի գիտնական Ա.Ջիվելեգովը գրում էր, որ Գր.Ջանչյանին սիրում էին բոլոր նրանք, ովքեր սիրում էին լույսի ու ազատության սկզբունքները և ընդհակառակը՝ ատում էին բոլոր նրանք, ովքեր ատում էին լույսն ու ազատությունը: Ոստիկանական մարմինների գործակալներ իրենց պետերին որքան մատնություններ էին հաղորդում Գր.Ջանչյանի մասին, որքան հայհոյանքներ ու զրպարտություններ էր նա իր հասցեին լսում մեծապետական հրատարակությունների կողմից: Գիտնականը զանց էր առնում այդ ամենը և կատարում էր իր օգտակար գործը: Նա իսկական պատմաբան չէր, բայց իր հրապարակախոսական գրչով արեց շատ ավելին, քան կաներ հազվագյուտ պատմաբանը՝ իր գիտական հետազոտու-

[10] Մշակ, 20. VII. 1900:
[11] Русские ведомости, 1900, № 236.
[12] Նույն տեղում:

թյուններով[13]:

Գր. Ջանշյանի հիշատակը հավերժացնելու համար հասարակական տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ հանդես եկան տարբեր առաջարկություններով: Այսպես, Մոսկվայի երդվյալ հավատարմատարները գտնում էին, որ Գր.Ջանշյանի անունով պետք է հիմնել ժողովրդական գրադարան[14]: Մի խումբ գերմանական գրողներ կարծում էին, որ պետք է հրատարակել «Եղբայրական օգնության...» նման մի ժողովածու և առաջացած գումարը հատկացնել «Հայ որբանոցների օգտին» : Պետերբուրգի, Մոսկվայի և Թիֆլիսի մի խումբ դրամատերեր ցանկություն հայտնեցին կազմել մի խնամակալություն և շարունակել հանգուցյալի «որբանոցների պահպանման գործը»[16]: Մտադրություն կար Պետերբուրգում Կ.Եղյանի նախագահությամբ ստեղծել խնամակալություն և «Եղբայրական օգնության...» եկամուտներից ու այլ միջոցներից առաջացած գումարներով շարունակել որբերի օգնության գործը[17]: Ցանկություն կար Մոսկվայում կազմակերպել հանգանականություն և Գր.Ջանշյանի գերեզմանին կանգնեցնել հուշարձան[18]: «Մշակը» հաղորդում էր, որ Մոսկվայի զեմստվային նախագահական վարչության ծառայողները "Русские ведомости"-ի խմբագրությանն ուղարկել են 50 ռուբլի, որ ներդնեն Գր.Ջանշյանի անվան ժողովրդական գրադարանի ստեղծման գործում[19]: Ապա շարունակում էր, որ նույն նպատակով մի այլ պարբերական իրենց խմբագրությանն ուղարկել է 100 ռուբլի[20]: Այնուհետև նույն թերթը գրում էր, որ մինչև հիմա խոսք է եղել Գր.Ջանշյանի գերեզմանի վրա մահարձան կանգնեցնելու մասին: Այժմ պետք է խոսքից անցնել գործի. «Տվեք ձեր նվերները Ջանշյանի մահարձանի համար»[21]:

ГРИГОР АВЕТОВИЧ ДЖАНШЯН (ДЖАНШИЕВ)

А.А.АМБАРЯН

Резюме

В 1870 – 80-х гг. Г.А.Джаншиев опубликовал ряд ценных статей, в которых с позиций либерализма подверг серьезной критике общественно-экономический строй России XIXв.

Г.А.Джаншиев был большим патриотом. Свой гонорар за книгу "Братская помощь пострадавшим в Турции армянам" он послал осиротевшим в Турции армянским детям, а гонорар за книгу "Из эпохи великих реформ" перечислил нуждающимся студентам и нищенствующим крестьянам России.

---

[13] Андрей Белый նշվ. աշխ., էջ 180:
[14] Նոր-Դար 19. IX. 1900, Բյուզանդիոն, 29. IX. 1900:
[15] Բյուզանդիոն, 29. IX. 1900:
[16] Նույն տեղում, 9. VIII. 1900:
[17] Արմենիա, 5. IX. 1900:
[18] Մշակ, 19. VIII. 1900:
[19] Նույն տեղում, 25. VIII. 1900:
[20] Տե՛ս նույն տեղում, 26. VII. 1900:
[21] Տե՛ս նույն տեղում, 28. X. 1900: